ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2025/2026թ-ի մագիստրատուրայի ուսուցման ընդունելություն

Քննական հարցաշար

Կրթական ծրագիր –«054301.02.7 Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր»

1. Գեոդեզիա գիտությունը, ուսումնասիրության խնդիրները:
2. Կետի տարածական դիրքի որոշումը:
3. Ի՞նչ է մասշտաբը, մասշտաբի տեսակները, մասշտաբային շարքը:
4. Ի՞նչ է կոորդինատային համակարգը: Կետի հատակագծային դիրքի որոշման կոորդինատային համակարգեր:
5. Գծերի կողմնորոշումը: Ազիմուտ, դիրեկցիոն անկյուն հասկացությունները:
6. Ի՞նչ է քարտեզագրությունը, քարտեզը, հատակագիծը, պրոֆիլը:
7. Ի՞նչ է ռելիեֆը, հորիզոնականները:
8. Հասկացողություն գեոդեզիական չափումների մասին, չափումների տեսակները և եղանակները:
9. Չափումների սխալները գեոդեզիայում, դրանց հատկությունները:
10. Գեոդեզիական աշխատանքների ժամանակ չափման ճշտության վրա ի՞նչ հիմնական գործոններ են ազդում:
11. Ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված չափումների ժամանակ կոպիտ, սիստեմատիկ և պատահական սխալները:
12. Անկյունաչափական գործիքներ, տեսակները:
13. Գծի երկարության չափումը: Հեռաչափերի տեսակները:
14. Գեոդեզիական ցանցեր, դրանց տեսակները:
15. Հատակագծային գեոդեզիական ցանցերի տեսակներ:
16. Բարձունքային կետերի ցանցեր:
17. Հանույթների տեսակները:
18. Տեղագրական հանույթներ:
19. Հանութայնին ցանցի ստեղծումը և դաշտային չափումների կատարումը:
20. Ի՞նչ է աշխարհագրական տեղեկատվական համակարգը:
21. Ի՞նչ է տարածական տվյալը, օբյեկտը, ազգային գեոպորտալը:
22. Տարածական տվյալների հիմնական հասկացությունները:
23. Աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաները. ԱՏՀ,ԱԹՍ,GPS, օդատիեզարական լուսանկարահանում:
24. ԱՏՀ կառուցվածքը: Ծրագրային հիմքը: Կիրառումը տարբեր ոլորտներում:
25. Տարբեր տարածական տվյալների շերտեր, որոնք ներկայացնում են բնական միջավայրը ԱՏՀ-ում:
26. Տարածական տվյալների հավաքում: Գլոբալ դիրքորոշման համակարգ:
27. Վեկտորային և ռաստերային տվյալներ. Կետ, գիծ, պոլիգոն:
28. ԱՏՀ հնարավորությունները նախագծերի կազման տարբեր ոլորտներում տարածական վերլուծությունների ժամանակ:
29. Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքները, դրանց բաղադրիչները:
30. Ֆոտոգրամետրիա առարկան և խնդիրները:

31. Ֆոտոգրամետրիայի էությունը, զարգացման պատմությունը և կիրառման հիմնական ոլորտները:
32. Օդալուսանկարահանման հիմնական սկզբունքները, տեսակները և թռիչքային պլանավորումը:
33. Օդալուսանկարահանման ժամանակակից համակարգերը և սարքավորումները:
34. 3D մոդելավորման և թվային պատկերների վերլուծության դերը շինարարական նախագծման և գեոդեզիական հսկողության գործընթացում:
35. Տախեոմետրեր, GNSS ընդունիչներ, լազերային սկաներներ և այլ ժամանակակից թվային գործիքներ՝ գեոդեզիական աշխատանքներում:
36. Ո՞րոնք են գեոդեզիական աշխատանքներում կիրառվող ժամանակակից թվային և էլեկտրոնային գործիքները (օրինակ՝ GNSS ընդունիչներ, տախեոմետրեր, լազերային սկաներներ), և ինչ դեր ունեն դրանք չափագրական գործընթացների ճշգրտության և արդյունավետության բարձրացման գործում:
37. Ի՞նչ է կադաստրը և որոնք են կադաստրային աշխատանքների հիմնական նպատակները:
38. Ի՞նչ է կադաստրային քարտեզը և որոնք են դրա կազմման առանձնահատկությունները:
39. Ի՞նչ է տարածքի կադաստրային բաժանումը, և որն է դրա կիրառման նշանակությունը:
40. Ի՞նչ է անշարժ գույքի չափագրումը (հաշվառումը):
41. Ինչպե՞ս է իրականացվում կադաստրային քարտեզագրության ժամանակ թույլ տված սխալների հայտնաբերումն ու վերացումը:
42. Ի՞նչ է անշարժ գույքի մոնիթորինգը, և ինչ դեր ունի այն կառավարման գործընթացում:
43. Ինչպե՞ս է իրականացվում անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը և տրամադրումը:
44. Ի՞նչ է ինտեգրված կադաստրը, և որն է դրա ներդրման նպատակը:
45. Ի՞նչ է հողային հարաբերությունը, և որոնք են դրանց ձևավորման ու կարգավորման հիմնական ուղիները:
46. Նկարագրեք հողային սեփականության ձևավորման և հողահատկացման գործընթացները:
47. Ի՞նչ է հողաշինարարությունը, և ինչ նշանակություն ունի հողային կադաստրում:
48. Ի՞նչ է անշարժ գույքի գնահատումը, և որոնք են դրա հիմնական ձևերն ու մեթոդները:
49. Ի՞նչ է գույքահարկը, և ինչպես է հաշվարկվում դրա չափը:
50. Ի՞նչ է հողային ֆոնդը, որոնք են դրա տեսակները և օգտագործման կարգավորումները ՀՀ-ում:

ՏԻՊԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Որոշել նշված մասշտաբով քարտեզում արտացոլված գծի հորիզոնական պրոյեկցիայի երկարությունը իրականում, եթե տրված է այդ հատվածի երկարությունը քարտեզի վրա:
2. Որոշել գծի երկարությունը քարտեզի վրա, եթե տրված է այդ գծի հորիզոնական պրոյեկցիայի երկարությունը տեղանքում:
3. Որոշել քարտեզի մասշտաբը, եթե տրված է գծի երկարությունը քարտեզի վրա և նույն գծի հորիզոնական պրոյեկցիայի երկարությունը տեղանքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մովսիսյան Ռ.Հ., Բեգլարյան Ա.Գ., Գեոդեզիա: Դասագիրք: Մաս I, Երևան, 2002թ., 134 էջ:
2. Մովսիսյան Ռ.Հ., Բեգլարյան Ա.Գ., Գեոդեզիա: Դասագիրք: Մաս II, Երևան, 2006թ., 135 էջ
3. Վ.Ա. Մարգարյան, Ինժեներական գեոդեզիա, ուսումնական ձեռնարկ
4. Առաքելյան Ս.Ն., Մարգարյան Ա.Ա., Թվային ֆոտոգրամետրիա, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2014թ.
5. Թովմասյան Ս.Վ., GNSS՝ Գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգեր, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2014թ.
6. Թովմասյան Ս.Վ., Գյուրջյան Ն.Խ., Անօդաչու թռչող սարքեր, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2019թ.
7. Հովհաննիսյան Վ., Ավետիսյան Մ., «Երկրատեղեկատվական համակարգերի կիրառություն», 2019թ., էջ 66-100: